


28127

Armenian Church Of Our Saviour

Ս. ՓՐԿԻԶ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ, ՈՒՍՏՐԻ

V. Rev. Father Yeznig Balian, Pastor



Գերաշնորհ
Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան, Առաջնորդ
Հայաստանեայց Եկեղեցւոյ Ամերիկայի
Նիւ Եորք

Մարտ 9, 1983

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Սուրբ Փրկիչ Եկեղեցւոյս տարեկան ծխական ժողովը գումարուեցաւ Կիրակի Յունուար 30, 1983 կէսօրէ ետք ժամը 1:30-ին 93 անդամներու մասնակցութեամբ: Բուէարկութեան մասնակցեցան 168 տրատու անդամներ:

Օրինաւոր կերպով կատարուեցան ծխական խորհուրդի, Ընտրողական Յանձնախումբի եւ Հաշուեքննիչ Յանձնախումբի ընտրութիւնները: Ծխական խորհուրդին վերընտրուեցան Տիարք՝ Արթրը Եղմեան եւ Ասպետ Զաքարեան իսկ նորընտիր անդամներն են Տիարք՝ Բիթրը Նարոյեան, Ռամբը Բաբէլեան եւ Ընտրիւ Սրապեան: Յաջորդ առաւելագոյն քուէ ստացած անձն է Տիար Ժան Պալեան: Յիշեալ անձերը Եկեղեցւոյս տրատու եւ գործունեայ անդամներ են եւ անոնց ընտրութիւնը Ձերդ Սրբազնութեաք ներկայացնելով կը խնդրենք անոնց ընտրութեանց վաւերացումը:

Համաձայն Առաջնորդարանէն ստացած մեր ուղղութեան, Գամեցէք նաեւ ներիակ գտնել Եկեղեցւոյս Տեղեկագիրներու Պրակը, Անդամական ժողովին ատենագրութիւնը, քուէարկութեան Գամարեա արդիւնքը, Եկեղեցւոյ ընդհանուր ելեւմտական Գաշուետուութիւնը եւ Առաջնորդարանէն դրկուած Հարցարանը՝ պատասխանուած:

Մատչելով ի Գամբոյր Ձերդ Ս. Աջոյն.

Ի դիմաց ծխական Անդամական ժողովի
Խոնարհաբար՝

Եզնիկ Արեղայ Պալեան
Նախագահ

